

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ
Ո Ր Ո Շ ՈՒ Մ

.... սեպտեմբերի 2019 թվականի N-Ն

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ
15-Ի N 1053-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 34-րդ հոդվածը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը **որոշում է.**

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի օգոստոսի 15-ի «Հայաստանի Հանրապետությունում 2019/2020 ուսումնական տարվա պետության կողմից ուսանողական նպաստների ձևով ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ (անվճար), առկա ուսուցմամբ կլինիկական օրդինատուրայի և ինտերնատուրայի ընդունելության տեղերը հաստատելու մասին» N 1053-Ն որոշման N 3 հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Հայաստանի Հանրապետության
վարչապետ

Ն. Փաշինյան

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ 2019/2020 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ՝
 ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՆՊԱՍՏՆԵՐԻ ԶԵՎՈՎ ՈՒՍՄԱՆ ՎԱՐՁԻ
 ԼՐԻՎ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՄԲ (ԱՆՎՃԱՐ), ԱՌԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՄԲ
 ԿԼԻՆԻԿԱԿԱՆ ՕՐԴԻՆԱՏՈՒՐԱՅԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ՏԵՂԵՐՆ ԸՍՏ
 ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ**

Արցախի Հանրապետություն

Մասնագիտությունը	Քանակը
Ակնաբանություն	1
Անեսթեզիոլոգիա և ռեանիմատոլոգիա	2
Հաբորատոր ախտորոշում	1
Մանկաբուժություն	1
Մանկական ալերգոլոգիա և իմունոլոգիա	1
Մանկական երիկամաբանություն (նեֆրոլոգիա)	1
Մանկական սրտաբանություն (կարդիոլոգիա)	1
Մանրէաբանություն	1
Նեոնատոլոգիա	1
Ներզատաբանություն (էնդոկրինոլոգիա)	1
Նյարդաբանություն	1
Պաթանատոմիա և կլինիկական մորֆոլոգիա	1
Ուռուցքաբանություն	2
Քիթ-կոկորդ-ականջաբանություն (օտորինոլարինգոլոգիա)	2
ԸՆԴԱՄԵՆԸ	17

ՏԵՂԵԿԱՆՔ – ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 15-Ի N 1053-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀՀ կառավարության որոշման նախագծի վերաբերյալ

Անհրաժեշտությունը

Հայաստանի Հանրապետությունում 2019/2020 ուսումնական տարվա՝ պետության կողմից ուսանողական նպաստների ձևով ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ (անվճար), առկա ուսուցմամբ կլինիկական օրդինատորայի ընդունելության տեղերն ըստ մասնագիտությունների /Արցախի Հանրապետություն/ փոփոխությունների առաջադրումը պայմանավորված է Արցախի Հանրապետության առողջապահության նախարարության կողմից վերանայված և ըստ պահանջարկի 2019/2020 ուսումնական տարվա /անվճար/, առկա ուսուցմամբ կլինիկական օրդինատորայի ընդունելության մասնագիտությունների ցանկի վերանայմամբ:

Ելնելով վերոշարադրյալից անհրաժեշտություն է առաջացել 2019 թվականի օգոստոսի 15-ի N 1053-Ն որոշման մեջ իրականացնել համապատասխան փոփոխություններ:

Ընթացիկ իրավիճակը և կարգավորման նպատակը

Հայաստանի Հանրապետության 2019 թվականի օգոստոսի 15-ի N 1053-Ն որոշմամբ հաստատվել է Հայաստանի Հանրապետությունում 2019/2020 ուսումնական տարվա՝ պետության կողմից ուսանողական նպաստների ձևով ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ (անվճար), առկա ուսուցմամբ կլինիկական օրդինատորայի ընդունելության տեղերն ըստ մասնագիտությունների /այդ թվում՝ 17 տեղ **Արցախի Հանրապետությանը**/:

Արցախի Հանրապետությանը հատկացված կլինիկական օրդինատորայի մասնագիտությունների գծով առաջացել է պահանջարկի փոփոխություն՝ *ընդհանուր վիրաբուժություն, ընդհանրական բժշկություն /2 տեղ/, ճառագայթային ախտորոշում /2 տեղ/, մանկաբարձություն և գինեկոլոգիա, մանկական անեսթեզիոլոգիա և ռեանիմատոլոգիա, մանկական վնասվածքաբանություն և օրթոպեդիա, ներքին բժշկություն* մասնագիտությունները փոփոխարինվել են՝ **լաբորատոր ախտորոշում, մանկական երիկամաբանություն /նեֆրոլոգիա/, մանրէաբանություն, ներզատաբանություն**

/էնդոկրինոլոգիա/, նյարդաբանություն, պաթանատոմիա և կլինիկական մորֆոլոգիա, ուռուցքաբանություն /2 տեղ/ մասնագիտություններով, ինչպես նաև մանկաբուժություն մասնագիտության 2 տեղի պահանջարկը դարձել է 1 տեղ:

Կլինիկական օրդինատուրայում համապատասխան տեղերի փոփոխումը հնարավորություն է ընձեռում ապահովել Արցախի Հանրապետության առողջապահության ոլորտի մասնագետներով հագեցվածությունը:

Ակնկալվող արդյունքը

Ներկայացված փոփոխությամբ կկանոնակարգվի Արցախի Հանրապետությանը հատկացված 2019/2020 ուսումնական տարվա՝ պետության կողմից ուսանողական նպաստների ձևով ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ (անվճար), առկա ուսուցմամբ կլինիկական օրդինատուրայի ընդունելության գործընթացը:

ՏԵՂԵԿԱՆՔ

**«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 15-Ի N 1053-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ»
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՄ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԲՅՈՒՋԵՆԵՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ**

«Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի օգոստոսի 15-ի N 1053-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման ընդունման կապակցությամբ պետական բյուջեում կամ տեղական ինքնակառավարման մարմինների բյուջեներում ծախսերի և եկամուտների էական ավելացումներ կամ նվազեցումներ չեն սպասվում:

ՏԵՂԵԿԱՆՔ

**«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2019 ԹՎԱԿԱՆԻ
ՕԳՈՍՏՈՍԻ 15-Ի N 1053-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ»
ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ
ՆՈՐՄԱՏԻՎ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ**

«Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի օգոստոսի 15-ի N 1053-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման ընդունման կապակցությամբ այլ նորմատիվ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտությունը բացակայում է: